12. ՃԱԿՏԻ ԳՅԻՐ

Կէլնի, չէլնի մեյ խատ թակավոր: Իսոր մեյ խատ լաճ կէլնի:

Ավուր մեկ էսա թակավոր կխիվընտնա: Կկանչի ուր լաճ, կասի. - Քալամ, ես ընթիյարցիր իմ, մընկա էլ կիսնաս որ խիվանտ պառկեր եմ, օրըմ չէ՝ օրըմ պիտի մեռնեմ, ամաև իմ մեռնելուց սորա քյե թամբիխ ըմ կուտամ: Ասված որ կսիրես, իմ խոսկ պախես: Ես որ կմեռնեմ, զըմեն օր մեյ խատ խաց կտանես, կթալես մեր քյեռշկ սարի իտնի խորի մեչ:

Քյանիմ՝ օրից սորա էսա թակավոր կմեռնի: Լաճն ի, ուր խոր կտանի կթաղի, քյառսուն օր վեր ուր խոր սուքյ կպախի, քյառսուն օրից սորա ինքյ կէլնի ուր խոր տեղ թակավոր:

Էս թակավորն ի, ուր խոր խաթրի խամար՝ զըմեն օր մեյ խատ խաց կտանի կթալի ուր քյեռշկ-սարի իտեի խորի մեչ: Մեկ քանի դիր խաց կթալի մեչ խորին, ավուր մեկն էլ կասի. «Կա չընկա՝ էսա խորի մեչ պամ կա, որ իմ խեր զիկ թամխեց, որ զըմեն օր խաց տանեմ թալեմ մեչ էսա խորին, ես պիտի մընտնեմ էսա խոր, խասկընամ, թե էստեղ ի՞նչ կա:»:

Թակավորն ի, կմտնի մեչ խորին, կտիսնա որ զյեռ մեյ խատ սիվտակ մորուս խալիվորըմ նըստե էնտեղ, մեյ կոլոն խաց լըցե ուր առճն, մեյ խատ սիվտակ խաց կառնի, մեյ խատ էլ սև խաց կտընի վերեն, կտընի մեյ թարաֆ. ըստընիս մեյ խատ սև խաց կառնի, մեյ խատ էլ սիվտակ խաց կտընի իրես՝ կտընի մեյ դիխ:

Թակավորն ի, որ էսա պան կտիսնա, խալիվորին կխառցուցի, կասի. - Է՜յ, բաբալըդ, ընչի՞ ըստընսկնա կանես, սիվտակ խացեր ճեռկ տիր, սև խացեր ճեռկ, էն տահա խորոտ կէլնի:

Խալիվորն ի, կիրիշկա էսա թակավորին, կասի. - Չէ, թակավո՛ր ապրած կենաս, ըսկուն խորոտ չէլնի, աշխընիս մեչ որ բիթուն խորոտներ ինեն մեյ դիխ, բիթուն մոներ մեյ դիխ, էն աշխար շատ

շոփ կավիրի: Պեպք ի՝ աղեկ մոնին, մոնն՝ աղեկին, խորոփ՝ գյեշին, գյեշ՝ խորոփին էլնի, թե չէ՝ բոշ ի:

Թակավորն ի, որ կլըսի թե էսա պա՜ն խալիվոր՝ ուր ասայ՝ թակավոր ապրած կենաս, շափ զարմայավ, ասայ. - Է՜յ, բաբալըղ, փյու զիկ ըսկի չիր փիսե, փյու ի՞նչ կիփիր, որ ես թակավոր ի:

Խալիվորն ի, կասի. - Թակավո՛ր ապրած կենաս, ես թե չէ մենակ քյո թակավոր էլնել կիւրեմ, ես կիփեմ թե փյու որ պըսակվիս, վիր պիփի առնես:

Թակավորն ի, որ էսա պա՜ն կլըսի, մեյ խափ կծծղա, կասի. - Բաբալը՛ղ, ես հալա չիմ կիփե՝ վիր պիփի առնիմ, փյու ի՞նչ կիփես, որ ես վիր պիփի առնեմ:

Խալիվորն ի, կասի. - Թակավոր ապրած կենաս, փյու ֆիլան գյեղի նախըրչու ախչիկ պիփի առնես: Աման էփա ախչիկն էլ էսա սիաթիս վեր սըոփին խոյ ի խանի, փեղով-ջըլով պառկեր ի, մեռնելու փոռ խիվանփ ի: Տյու էն խիվանփ ախչիկ պիփի առնիս:

Թակավորն ի, որ էսա կլըսի՝ մեյ խափ կծծղա, կայ պա՜րն կանի էփա խալիվորին, կթողնի կէլնի փյուս:

Թակավորն ի, որ կէլնի փյուս, կասի. «Տո էսա խալիվոր ի՞նչ կասի, ես թակավորմ' էլնիմ, էրթամ նախըրչու ախչի՞կն առնեմ: Ընչի՞, մեչ աշխըրին ախչիկ կիյամաթ էլավ. ես էն խալիվորի խաթրի խամար էլեր ի, պիփի էրթա՜մ էն նախըրչու ախչիկն ըսպանիմ զյամ»:

Թակավորն ի, կէլնի ուր պափրասփութեն կփիսնա, ուր իշխաներայ քանիմ խափ կառնի խեփ ուր, կէրթա ավ անել: Որ ավ կանի կպըծնի՝ միանեն կանի անզյընալ, կուգյա էփա խալիվորու ասած գյեղ՝ կիշեր էնփեղ կոնախ կէլնի:

Էփա գյեղականեր որ կփիսնան թակավոր կիշեր ուրենց կոնախ էլավ, համան շափըմ ոչխըրներ կմորթեն, թոնիրներ կվառին, գյաթա կթըխեն, փոխինփ կշաղըղեն, խուրուդու կկախեն, կպիրեն թակավորուն էնա՜ն ուր աքըրին պափիվ կանեն:

Թակավորն ի, էփա ուրախութնի խամար իսկի էնփեղեր չէլնի. ուր խելքյ-խիյալ դիխ նախըրչու փուն, դիխ նախըրչու ախչիկն ի: Ինքն ուր կմեզեր, կասեր. «Ի՞նչխ իմնամ նախըրչու փուն ո՞րն ի, կիշեր էրթամ ինոր քյած ըսպանեմ, ազափվեմ»:

Թակավորն ի, շափ կինի ըզդեխ, էնդեխ, վարիհայի կիմնա:

Կես կիշիրին որ բիթո՜ւն կքյընեն, թակավորն ի յավաշմ կէլնի վեր, ուր թուր կչըլփի, կպըռնի ծեռ, կէրթա կմըփնի նախըրչու փուն: Որ կմըփնի փուն՝ փըռան ճեղքյից կիրիշկա, որ նախըրչու փուն ճրագ կա, ախչիկ պառկե, կփըքյփըքյա, մերն էլ փառչ պիրե մոփայույի ախչըկան պոկին, ճյուր կխըմյուսի:

Թակավորն ի, կկայնի տըռան իրն, չուր մեր ախչկան ճյուր խըմըցուցելուց սորա ճրագն էլ կընցուցի, կէրթա կպառկի:

Թակավորն ի, խեր որ կտիսնա մեր քյընավ, պաշլայեց խըռխըռալ՝ յավաշըմ տյուռ կպանա, կմըտնի ներս, ախչըկան լըխեֆ կվիրուցի, ուր թուր կխըճի իսոր սոտի մեչ աջալա կթողնի կէլնի տյուս, կէրթա ուր չատըրի տակ:

Առատուն մութ լյուսուն ախչըկան մերն ի, կէլնի կիրիշկա որ ախչըկան մոտեն ծեն չէլնի: Համան շոտմ կխասնի, կասի. չէլնի՞ մեռեր ի, լըխեֆ կվիրուցի, կտիսնա որ ի՞նչ ախչիկ. ինքյ ուր արուն գյըռեխ խառվի իրար, աման ախչիկն էլ խանգյիստ քընե: Կըտորմ՝ էլ կաչկի, չուր ախչիկ կկակխի:

Մերն ի, որ կտիսնա ախչիկն ակխավ, կխառուցի, կասի. - Ախչի՛կ, էտա ի՞նչ էլեր ի, էտա խոս երտի է փըլխե՞, աստված քյո տուն ավեր չանի, ընչի կիշեր մի ծեն չիս տըվի:

Ախչիկն ի, կասի. - Մարե՛, ես էլ չեմ կիտե ի՞նչխ էլավ: Կես կիշերին մենակ ես էն իմցա, որ պաղ պամ խըշտըվավ իմ սիրտ, յարի մըռմկոիս իմ խելքյ կընցաց: Էլ չեմ կիտե ինչ էլի: Գյեռ նոր աչկերս կպանամ, փառքյ աստըծու, էլ իմ սիրտ չի ցավա, ըսկում խովցեր ի որ, կասես թե ըսկի յարա չկա:

Մերն ի, մեյ խատ ուր իրես խաչ կխանի կասի. «Կա չըկա խրիշտակներն ին իկե, ճըղե»: Կխանի ուր ախչըկան խալվըներ, կլըվա, վարհասլի էսա ախչիկ էրթալով կծըրի, կաղեյնա կէլնի վեր: Օր վեր ավուր, օր վեր ավուր էսա ախչիկ կպետանա, ըսկում էլ կխորոտկընա, որ կէլնի խուռնի-խրեղեն:

Մարթ չուտեր չըխմեր, էսա ախչըկան խորոտկութեն թամաշա աներ:

Թակավորն ի, էսա ախչըկան ըսպանելուց սորա միամըտվիր էր, ընգյիր էր խեր ուր քյեֆին:

Ավուր մեկ էսա թակավորի մեր կկանչի ուր լաճուն, կասի. - Բալամ, ես ըխթիյարցիր իմ, օրմ չէ, օրմ պիտի մեռնիմ, աման մեռնելուցս առաճ կուզիմ քյե թաքյնուպըսակին տիսնամ, կուզիմ քյե պըսակիմ, սիրտըս միամտվի, նոր ենգյախ աստված խոգյիս կառնի՝ թող առնի:

Թակավորն ի, կասի. - Մարե՛, հալա շոտ ի, պըսակվիլ ուր տեղն ի, չի փախնի:

Մերն ի, կասի. - Չէ, բալամ, արե՛ տյու զիկ տողրին ասա. վի՞ր ախչիկն ես աչք թալե, ուզենք քյե խամար, քյե պըսակեմ՝ էտա ղարտն էլ թող էլնի իմ սըռտեն:

Թակավորն ի, կասի. - Մարե՛, որ տողրին կխառցուցես, չուր էսօր ես հալա ախչիկմ չիմ տիսե, որ իմ սիրտ խփա վեր էտա ախչըկան:

Մերն ի, կասի. - Բալա՛մ, որ ըսկուն ի, կկայնես մեր քյեռշկ-սարի փենջարեն, ամր կանես, որ մեչ քյո քյաղքյին ինչ կանդար ախչիկ որ կան, մեյմեկ գյան քյո փենջարի տըղկանց ընցընեն: Տյու որ ախչըկան որ խավնար՝ քյո ծեռւսց խընձեռոր զարկ էն ախչըկան, ես էն ախչիկ կուզիմ քե:

Թակավորն ի, որ կտիսնա թե ուր մեր շատ աղաչանքյ կենի, ուր մոր խաթրիս չէլնի: Ուր դալալներաց կթամխի, որ ինեն մեչ քյաղքյին, բոռան ասեն. վաղն առատուն մեչ էսա քյաղքյին ինչ կանդար ախչիկ որ կա, թող ուրենց խալվըներ խայնին գյան թակավորու քյեռշկ-սարի տկանց ընցընին:

Էն մեկել օր առատուն գյըրըմոց կինի քյաղաքյ, ահալին կիմնա որ թակավոր պսակվելու մարամի իտոր խամար հըմեն մեկ կբաշլայի ուր ախչըկան լողկընցուցել, ծամեր սանտրել, թազա խալվըներ խագյուցել, բալքյի թակավոր ուրենց ախչըկան խավնի, առնի ուր կընիկ:

Կես օրվան թարաֆ քյաղքյի ախչըկներ բյուլուգյ-բյուլուգյ շորորալեն կուզյան թակավորու քյեռշկ-սարի տըղկանց կընցընին, կտառնան:

Թակավորն ի, խընձեռոր ծեռ խեստ ուր մոր կայներ ի փենջարեն, աման խընձեռոր մարթու չի զարկե: Մոր կասի. - Մարե, էսա չէլավ, իսոնց մեչ իմ ուզած ախչիկ չընկա:

Էն մեկել օր թակավորի մերն ի, դալալներ կէօրեռխկի գյեղրանք, ինչ կանդար որ ազաք ախչիկ կա՝ կժողվի, կպիրի ուր քյեռշկ-սարի առաճընվեն կընցուցի: Հան սոն էսա նախընչու ախչիկ կուգյա կընցընի:

Թակավորն ի, խեստ որ կիրիշկա էսա ախչըկան խորոտկութեն՝ խելքյ գյընխուց կերթա, համան ուր ծեռաց խընձեռոր կզարկի էս ախչըկան:

Թակավորու խալայեղներն ին, որ էսա պան կտիսնան, շոտըմ կիճնին տակ, կխասնին էսա ախչըկան, կառնին կտանեն համամ, կլողկընցուցին, թակավորավայել խալավ կխագյուցեն, կպիրեն մոտ թակավոր:

Թակավորն ի, ամր կանի, խարսնընսի թանդարյուք տիսնան: Յոթն օր, յոթ կիշեր խարսնիս կանի, խեստ էտա նախընչու ախչըկան կպընսակվի:

Պընսակվելուց սորա, էն ամոճի կիշեր որ կերթան մեկտեղ կպառկեն, թակավորու ծեռ կդիպնի էսա ախչկան սիրտ, կտիսնա որ էփեջա ճոչ փոսըմ կա իսոր սընոտի վերեն: Կխառնցուցի, կասի. - Ախչիկ, էսա ի՞նչ փոս ի վեր քյո սընոտին:

Ախչիկն ի, կասի. - Էսրիս երկու տարի առաճ ես ճոչ խոցմ

խանիփի վեր իմ սըրտին: Ըսկում ծանըր խիվընփյա, որ բիթուն զզնիյ ծեռ քուշիյին, ասեյին՝ նախըրչու ախչիկ կմեռնի: Ավուր մեկ ես պառկուկ ի, կես կիշիրվան դիխ փիսա որ մեյ խափ պաղ պամ մըփավ իմ սիրփ, փողրի խոյի օրթեն: Ես էփա պաղ պանի մըփնիլ կիփյա, ըսկուն մըռմըռայ, ըսկուն մըռմըռայ, որ էփա մըռմուռն իզա̈րկ իմ ջիգյար, իմ խելքյ կընայ: Առափուն էլան վիր, փիսան որ ի՞նչ. իմ խոյ փըլխիր ի, ես, իմ արուն, գյըռեխ խառվիր եմ իրար: Վեր էսա պանին յավաշ-յավաշ ժըրա, աման էն խոյի փեղ հալա փոս ի, չըլըյվե:

Թակավորն ի, որ էսա պան կլսի՝ ուր արած կինի ուր միփ, կխասկընա, որ էսա էն նախըրչու ախչիկն ի, որ ինքյ ուր խելքյով ըսպաներ էր: Փառքյ կուփա ասփըծուն, կասի. «Խալիվոր, ա̈ղորդ որ քյո խաբըրներ մեյն էլ սուփ չին, ասփված ինչ որ գյրեր ի մարթու ճակափ՝ էն էլ պիփի էլնի, մարթ չի կանա ասփըծու գյըրած ավիրի»: